

Փաստաթերթիկ հաշմանդամության նահանգային ապահովագրության ծրագիր

Հաշմանդամության նահանգային ապահովագրությունը (SDI) աշխատողների կողմից ֆինանսավորվող ծրագիր է, որը իրավասու լինելու դեպքում՝ կախված տվյալ անձի եկամտից, տրամադրում է շաբաթական աշխատավարձի մոտավորապես 70-ից 90 տոկոսը: SDI ծրագիրը բաղկացած է երկու առանձին աշխատավարձի մասնակի փոխարինման նպաստներից՝ ***Հաշմանդամության ապահովագրությունից (DI) և ընտանեկան հանգամանքներով պայմանավորված վճարովի արձակուրդից (PFL):**

Ապահովագրված են SDI-ի կողմից

Մոտ 18.7 միլիոն կալիֆորնիացի աշխատողներ ապահովագրված են SDI-ի կողմից: Դուք իրավասու եք, եթե հանդիսանում եք՝

1. Կես կամ լրիվ դրույքով աշխատող, ով պետության կողմից սահմանված աշխատավարձի պահումների միջոցով վճարումներ է կատարել SDI ծրագրին [դուք կարող եք SDI-ի փոխարեն ապահովագրված լինել կամավոր պլանով, այցելեք [VP Information](http://edd.ca.gov/Disability/VP_Information.htm) (edd.ca.gov/Disability/VP_Information.htm)]:
2. Ինքնագաղթված կամ անկախ կապալառու Կալիֆորնիայի բնակիչ, ով վճարումներ է կատարել հաշմանդամության ապահովագրության ընտրովի ապահովագրման ծրագրին: Ավելին իմանալու համար այցելեք [Self-Employed/Independent Contractor](http://edd.ca.gov/Disability/Self-Employed/IndependentContractor) (edd.ca.gov/Disability/Self-Employed.htm):

Ես իրավասու՞ եմ

Դուք նպաստների համար իրավասու եք, եթե.

- Հայց ներկայացնեք առցանց կամ փոստով ձեր հաշմանդամության կամ ընտանեկան արձակուրդի սկսվելու օրվանից՝ DI-ի համար ոչ ուշ, քան 49 և PFL-ի համար 41 օր առաջ:
- Հայցի բազային 12-ամսյա ժամանակաշրջանի ընթացքում վաստակել եք առնվազն \$300 աշխատավարձ (որից վճարվել է SDI):
- Ձեր լիցենզավորված բուժաշխատողը լրացրել է ձեր հաշմանդամությունը հավաստող փաստաթղթեր (DI-ի համար): Կամ խնամքի անհրաժեշտությունը հավաստող բժշկական փաստաթղթեր (PFL խնամք): Կամ տրամադրեք ձեր նոր երեխայի հետ հարաբերություններ վկայող (PFL մտերմացում) կամ օժանդակող զինվորական փաստաթղթեր (PFL զինվորական օգնության համար):

Դուք հնարավոր ե՞ք իրավասու չեք նպաստների համար, եթե.

- Նպաստ եք ստանում մեկ այլ EDD նպաստների ծրագրից (Գործազրկության ապահովագրություն, DI, կամ PFL):
- Պահպանվել է ձեր աշխատավարձը:
- Ձերբակալված եք հանցագործության պատճառով:
- Կրոնական համոզմունքների պատճառով ազատվել եք SDI հարկերից:
- Չեիք աշխատում կամ աշխատանք չեիք փնտրում հաշմանդամության ընթացքում կամ ընտանեկան արձակուրդի սկսվելու պահին:
- Շաբաթական դրույքաչափով կամ DI-ի վճարումների չափ կամ ավելի աշխատողների փոխհատուցում եք ստանում:

SDI-ը չի տրամադրում աշխատանքի պաշտպանություն կամ աշխատանքին վերադառնալու իրավունքը: Այնուամենայնիվ, կարող է տրամադրվել աշխատանքի պաշտպանությունը, եթե դուք ապահովագրված եք ընտանեկան և բժշկական արձակուրդի մասին դաշնային օրենքով, Կալիֆորնիայի ընտանեկան իրավունքների մասին օրենքով կամ նոր ծնողների արձակուրդի մասին օրենքով:

Ինչպե՞ս դիմել

Նպաստների համար դիմեք առցանց կամ փոստով՝ լրացնելով *Claim for Disability Insurance (DI) Benefits* (DE 2501) կամ *Claim for Paid Family Leave (PFL) Benefits* (DE 2501F): Դիմեք առցանց [myEDD](http://myedd.edd.ca.gov)-ի միջոցով (myedd.edd.ca.gov): Ընտրեք SDI Online: Փոստով դիմելու դեպքում պահանջեք թղթային պատճենը զանգահարելով 1-800-480-3287 DI-ի համար և 1-877-238-4373 PFL-ի համար, դրա համար այցելեք առցանց [EDD Forms and Publications](http://edd.ca.gov/Forms) (edd.ca.gov/Forms) կամ այցելեք ձեզ մոտ գտնվող SDI գրասենյակ: Գրասենյակների հասցեների ցանկին ծանոթանալու համար աղելեք [Contact SDI](http://edd.ca.gov/Disability/Contact_SDI.htm) (edd.ca.gov/Disability/Contact_SDI.htm):

Նշում. քաղաքացիությունը և ներգաղթային կարգավիճակը չեն ազդում իրավասության վրա:

***Հաշմանդամության ապահովագրություն**

Հաշմանդամության ապահովագրությունը տրամադրում է աշխատավարձի փոխարինման նպաստներ այն աշխատողներին, որոնք ի վիճակի չեն աշխատել աշխատանքի հետ չառնչվող ֆիզիկական կամ մտավոր հիվանդության կամ վնասվածքի պատճառով: Հաշմանդամությունը ներառում է՝ ընտրովի վիրահատություն, հղիություն, ծննդաբերություն կամ նման բժշկական իրավիճակներ: Նպաստները վճարվում են առավելագույնը 52 շաբաթ: Ավելին իմանալու համար այցելեք [Disability Insurance](http://edd.ca.gov/Disability) (edd.ca.gov/Disability):

***Ընտանեկան հանգամանքներով պայմանավորված վճարովի արձակուրդ**

Կալիֆորնիայի ընտանեկան հանգամանքներով պայմանավորված վճարովի արձակուրդը աշխատավարձի փոխարինման նպաստներ է տրամադրում աշխատողներին, ովքեր արձակուրդ են վերցնում ընտանիքի ծանր հիվանդ անդամին խնամելու, ընտանիքում նոր երեխայի հետ մտերմանալու, կամ ընտանիքի զինվորական անդամի զինվորական տեղակայման առիթով որակավորման իրադարձությանը մասնակցելու համար: Ավելին իմանալու համար այցելեք [Paid Family Leave](http://edd.ca.gov/PaidFamilyLeave) (edd.ca.gov/PaidFamilyLeave):

EDD-ն հավասար հնարավորությունների գործատու/ծրագիր է: Հաշմանդամություն ունեցող անձանց խնդրանքով տրամադրվում են օժանդակ օգնություն և ծառայություններ: Ծառայությունների, օժանդակ միջոցների և/կամ այլընտրանքային ձևաչափերի հարցումները իրականացվում են զանգահարելով 1-866-490-8879 (ձայնային) հեռախոսահամարին: TTY-ից օգտվողներ, խնդրում ենք զանգահարել Կալիֆորնիայի փոխանցման ծառայություն 711 հեռախոսահամարով: